ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2022 թվականի N 1720 - Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2009 թվականին Գլոբալ հիմնադրամի 5-րդ փուլով ֆինանսավորվող տուբերկուլոզի դեմ պայքարի դրամաշնորհային ծրագրի միջոցների հաշվին պետական գնումների ընթացակարգով ձեռք բերված 2007 թվականի արտադրության «HYUNDAI TUCSON-2.7» («Հունդաի Տուքսոն-2.7») մակնիշի, 808 UO 01 պետական համարանիշի, KMHIN81DP8U756266 նույնացման համարով, 7,950,000 դրամ սկզբնական արժեքով, 662,500 դրամ մնացորդային արժեքով ավտոմեքենան ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոմեքենայի պահպանման ծախսերը կկատարվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացվող միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավարի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոմեքենայի հանձնման-ընդունման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.11.2022

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ